

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունուարի 22-ին: Պետրոգրադում տեղի է ունեցել Ն. Սրբութեան կողմից օրհնառաք Կոնդակի յանձնումը: ուղղած «Հայ-փախստականներին օգնող Պետրոգրադի Քաղաքային Յանձնաժողովի» պատուաւոր նախագահ Հանգուցեալ՝ կոմս Իւան Իւանովիչ Տօլստոյին: նոյն Յանձնաժողովի նախագահ՝ Պետական խորհրդի անդամ Մերակուտական: իսկական դադա. խորհրդական Նիկօլայ Ստեպանովիչ Տադանցեին: Պետական խորհրդի անդամ Ալէքսանդր Վասիլևիչ Վասիլևին: ժերակուտական Սերգէյ Վալենտիևիչ Իւանովին: ուսուցչապետ Միխայիլ Իւանովիչ Ռոստովցեին և Պօղոս Ռոֆսէֆեան Աուկասեանին:

Կոնդակի մատուցումը տեղի ունեցաւ Ն. Ս. Տադանցեի բնակարանում: Հայ համայնքի առանձին պատգամաւորութեան ձեռքով: կազմուած Կրիզոր Թադ. Տիգրանեանից: գեներալ Յովհ. Ս. Բաղրամեանից: Ալէքսանդր Բ. Ասրիբէկեանից և Յովհաննէս Խաչ. Զաւրիանից:

Պատգամաւորութիւնը բնորոշուեցաւ ժամը 2-ին և պ. Տիգրանեանը հակիրճ դիմումով յայտնելով իրենց այցի նպատակը: ապա պ. Ասրիբէկեանը կարգալով Ն. Սրբութեան Կոնդակի ուսերէն թարգմանութիւնը:

Ն. Ս. Տադանցեի խիստ յուզուած ձայնով: ասաց: Քնդրում եմ Ձեզ: հաղորդել Ն. Սրբութեան: ամենայն «Հայոց Կաթողիկոսին, որ մինչև հօգուս խորքը զգացուած եմ այս բողոքի: երբ բողոք եմ ունենում կեանքիս արեւմուտքին արժանանալ և ստանալ Հայրապետական օրհնութիւն այն համեառ գործակցութեանս համար: որ ունեցել եմ այդ գործի մէջ: Ղգում եմ: որ երկար պիտի շատարեմ և այդ օրհնութեան շնորհիւ առաւել դիւրին «կլինի ինձ համար ներկայանալ Բարձրեայի Աթոռի առաջ:

Պատգամաւորութիւնը ներկայացնելով Ն. Սրբութեան իսկական Կոնդակը: Ռուս թարգմանութեան հետ: առան-

ձին, արուեստօրէն պատրաստել տուած կաշուէ պահպանակի մէջ Ն. Ս. Տաղանցեին, իրենց հրատեղար տալով մեկնեցին:

Կոնդակը գրուած է հին հայկական գրչութեամբ և զարդարուած Հայ մանրանկարչական արուեստի նմուշներով: Մ. Աթոռ Ս. Էջմիածնի և Հայրապետական նշանների նկարներով:



Եղբայրական օգնութեան նախագահ. Տ. Գէորգ վարդապետը, յունուար 24-ին, Եղբ. օգն. Յանձնաժողովի և գաղթականական անհրատեղար գործերով մեկնեց Տփլիս:



Նոյն օրը, Ն. Սրբութեան յանձնարարութեամբ, Սիւնօղի անդամ Տ. Մատթէոս եպիսկոպոս մեկնեց Տփլիս և այնտեղից պէտք է հանդիպէ Բագու, Ս. Էջմիածնի «Զանգուի առաւել» գործերով:



Յունուար 25-ին Մ. Աթոռ ժամանեցին Տփլիսից Մ. Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովի անդամներ ճարտարապետներ պ. պ. Անատոյի, Նիկ. Կալցին, Արշակ Արրահ, Բարանեան և Նիկողայոս Աղէքսան Մաղաթեան, առ տեղեան ուսումնասիրելու, թէ որքան մեծ ազդեցութիւն է ունեցած անցեալ հոկտ. 15-ի երկրաշարժի հարուածը Մ. Տաճարի և ս. Հովիտիմեանց վանքի վերայ:



Յունուար 26-ին Յանձնաժողովի Տփլիսից ժամանած անդամները, ընկերակցութեամբ նոյն Յանձնաժողովի անդամ Տ. Վրթանէս վարդապետի, Դիւանապետ Տ. Տիրայր ծ. վարդապետի հետ մանրազննին հետախուզութեան ենթարկեցին Տաճարի ներսը, ուր ցուցումներ էր տալիս աւագ-Լուսարար Տ. Անանիա արքեպիսկոպոսը, կամարները, հարաւային՝ ս. Յովհաննու սեղանի վերայ եկած կամարա-

կապը: Ապա բարձրացան Մ. Տաճարի կտուրը և նոյնպիսի մանրազննին խուզարկութեան ենթարկեցին հարաւային փոքրիկ գմբէթի ստորին շորս: և վերին վեց սիւները, կամարները, թաղապատը, մի առ մի տեղն ու տեղը նկարելով, բնականւոյց շափեր առնելով: Այդ մանր զննութիւնը տեւեց առաւօտից մինչև ժամը 2-ը:

Ճաշից յետոյ նոյնպիսի մանրազննին զիտողութեան ենթարկուեցաւ ս. Հռիփսիմէի վանքը, նոյն կազմով, որին միացաւ և վանահայր, Տ. Գարեգին ծ. վարդապետը որ տալիս էր կարեւոր բացատրութիւններ նախկին և արդի վիճակի մասին:

Երեկոյեան, ժամը 6-ին պ. պ. ճարտարապետներն արժանացան Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան, որի ժամանակ մանրամասն զեկուցուին տուին իրենց զիտողութիւնների, տեսածների և երկրաչարժի արած ազգեցութեան վերայ՝ ընդհանրապէս և մասնաւորապէս Մ. Տաճարի հար. փոքրիկ գմբէթի և ս. Հռիփսիմէի վանքի նկատմամբ: Ճարտարապետների կարծիքով, ճշմարիտ էր զօրեղ հարուածի ազգեցութեամբ աննշան շեղումներ եղած են. սակայն այդ ամենն այնպիսի բնաւորութիւն չէ կրում, որ որ և է վտանգ սպառնայ շինութեան ամբողջութեան:

Այս եզրակացութիւնները նոցա մասնաւոր կարծիքը լինելով, խնդրեցին և խոստացան ի մօտոյ Տփխիսում Մ. Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովի ընդհանուր ժողովի նիւթ դարձնել իրենց զիտողութիւններն ու եզրակացութիւնը և վերջնական եզրակացութեան յանդելով առանձին զեկուցուին տալ Ն. Սրբութեան:

Ն. Սրբութիւնը գոհ մնալով նոցա կատարած աշխատանքից, օրհնեց և յանձնարարեց ի մօտոյ հրաւիրել ընդհ. ժողով և նորա եզրակացութեան մասին Իրեն զեկուցանել:

Ընդունելութիւնը տեւեց մօտ մի ժամ, որի ժամանակ Ն. Սրբութեան ներկայանալու բազմ ունեցաւ ճարտարապետ Մադաթեանի ամուսին տիկ. Մարգարիտ Գրիգ. Մադաթեան:

Յունուարի 26-ին, Պետրոգրադում, մի առանձին պատգամաւորութեան ձեռքով, որի անդամներն էին պ. պ. Գրիգոր Թադէոսեան Տիգրանեան, Յովհաննէս Սարգ. Բաղրամեան, Աղէքսանդր Բաղիշ-բէկեան Ասրիբէկեան և Յովհաննէս Խաչ. Զաւրեան, ներկայացուեցաւ Պետրոգրադի քաղաքագլուխ Պ. Ի. Լիլեանովին:

Պ. Քաղաքագլուխն ընդունեց պատգամաւորութեան անդամներին քաղաքային Տան մեծ դահլիճում, քաղաքային վարչութեան անդամների ներկայութեամբ: Պ. Տիգրանեանը զիմելով Քաղաքային մի ճառով, շեշտեց այն համակրական զգացումներն ու գործնէութեան ջերմութիւնը, որ Քաղաքային վարչութիւնը ցոյց է տուել հանգուցեալ կոմս Տոլստոյի քաղաքագլխութեան օրով դէպի հայ փախատականների վիճակը, որին իբրև արձագանք է Հայրապետական օրհնառաք այս կոնդակը:

Պ. Ասրիբէկեանը կարգաց Հայրապետական կոնդակի ուսուերէն թարգմանութիւնը, որի ժամանակ ներկայ եղող բոլոր հանդիտականները, յստնկայս, լսում էին ամենամեծ ուշադրութեամբ:

Պ. Լիլեանովը խնդրեց պատգամաւորութեան յայտնել Քաղաքի, Քաղաքային վարչութեան և իւր կողմից իրենց խորին շնորհակալութիւնը Նորա այդպիսի բարձր ուշադրութեան և Հայրապետական օրհնութեան համար, աւելացնելով, որ ինքը նայն օրն իսկ կգեկուցանէ Քաղաքային Խորհրդարանին այս մասին: Կոնդակը յարգանաց պատշաճ տեղ կունենայ Քաղաքային Վարչութեան Դահլիճում, ճաշաւոր շրջանակի մէջ առած: Վերջացնելով իւր խօսքը և շօշափելով ներկայ մեծ պատերազմի այժմեան վիճակը, յարեց, որ հեռու չէ այն ժամը, որ բզկտուած Հայաստանը կստանայ իւր անձկացած վարձատրութիւնը:

Ներկայ եղողները մեծ հետաքրքրութեամբ դիտում էին կոնդակի գեղանկար զարդերը, առանձին ուշադրութեան առնելով առաքեալներին, ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերները, ս. Էջմիածնի և Արարատի նկարները, Հայ-

կական գրութեան ոճը և ն. Սրբութեան սեփական ստորագրութիւնը:



Յունուար 27-ին Տաճարի զիտոգութեան համար ճարտարապետների մասնախումբը վերադարձաւ Տփլիս:



Տ. Արիտակէտ վարդապետ Զուլոյեան, ի պաշտօնէ, նշանակուեցաւ ն. Սրբութեան հաճութեամբ՝ օգնական-լուսարարապետի Մ. Տաճարի:



Յունուարի 28-ին Հոգևոր ձեմարանում կազմակերպուած գրական երեկոյթին դասախօսեց ձեմարանի պատմութեան դասատու պ. Աշոտ Յովհաննիսեան, նիւթ ունենալով «Հայոց միջնադարի քաղաքական մտայնութիւնը»:



Փետրուար 5-ին Տփլիսից Մ. Աթոռ վերադարձան Տ. Խորէն եպիսկոպոս և Տ. Գեորգ վարդապետ: որոնք և առանձին ունենցրութեան արժանանալով ն. Սրբութեան կողմից զեկուցին Տփլիսում իրենց կատարած յանձնարարութիւնների մասին:



Փետր. 7. ին ն. Սրբութեան ներկայանալու բաղդ ունեցաւին եկած *** զօրամասի գնդապետ նիկօլայ Ալէքսանդրովիչ Կարաուլով, յատուկ ցանկութիւն յայանած լինելով արժանանալու ն. Սրբութեան օրհնութեան:



Փետր. 8-ին Մ. Աթոռ ժամանեցին Բաղուից Տ. ներսէս ա. քհնյ. Տ. Կարապետեան, Ալէքսանդրովից պ. Երուանդ Տ. Մինասեան մասնակցելու Ուսումնարանական Յանձնա-

ժողովին կից առանձին խորհրդակցութեան նիստերին, որ պիտի զբաղուէր պետական միջնակարգ դպրոցների մէջ կրօնի ծրագիր մշակելով՝ հայ աշակերտութեան համար:

Նոյն խորհրդակցութեան նիստերին մասնակցելու համար հրաւիրուած միւս անդամներ՝ Տ. Սահակ ա. քհյ. Սահակեան, Տ. Իրիգորիս ա. քհյ. Երզնկեան և պ. Միսաք Խոստիկեան անկարող եղան ժամանել Մ. Աթոռ ճանապարհների հաղորդակցութեան գժուարութեան պատճառով:

Յանձնաժողովը իւր նիստերն ունեցաւ և զբաղմունքները վերջացնելով կազմած ծրագիրն առանձին եզրակացութեամբ ներկայացրեց փետր. 13-ին Ն. Սրբութեան ի վերջնական անօրինութիւն:

* * *

Փետրուար 8-ին Ն. Սրբութեան ներկայանալու արժանացան Աղէքսանդրապոլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետ, որ եկած էր Մ. Աթոռ դպրոցական գործերի ղեկուցումով, պ. Ստեփան Մալխասեան, որ եկած էր համագումարի զբաղմունքների մասին որոշ ղեկուցում տալու Ն. Սրբութեան և պ. Երուանդ Տ. Մինասեան, որ եկած էր Իպր. Յանձնաժողովի նիստերին մասնակցելու:

* * *

Նոյն օրը Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան արժանացաւ Բազուի ս. Թաղէոս և Բարդուղիմէոս եկեղեցու միարան Տ. Ներսէս ա. քհյ. Տ. Կարապետեան:

* * *

Փետրուար 9-ին. ս. Վարդանանց տօնի օրը Մ. Աթոռ հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ ի յիշատակ ազգային մեծ նահատակների Պատարագին Ն. Սրբութիւնը բարեհաճել էր իջնել Մ. Տաճար և ներկայ լինել նաև հոգեհանգստեան հանդիսին, զիւր յանցնելով ամբողջ միարանական ուխտի:

Պատարագիչն էր Աշոտ եպիսկոպոս, որ օրուայ հանդիսի առթիւ քարոզ խօսեց ժողովրդին:



Փետր. 9-ին, ա. Վարդանանց յիշատակին աշակերտական գրական հանդէս տեղի ունեցաւ Մ. Աթոռի Հոգևոր ձեմարանում. երեկոյեան: Հանդէսը իւր ներկայութեամբ պատուեց Վեհ. Հայրապետը, զլուխ անցած Միաբանական Ուխտին: Աշակերտական այդ հանդիսին մասնակցեցին իրենց ատենախօսութիւններով ձեմարանի հ. Տեսուչ՝ Տ. Գարեգին Ժ. վարդապետը և Բազուից եկած Տ. Ներսէս ա. քհյ. Տ. Կարապետեան:

Հանդիսի վերջը ն. Սրբութիւնն օրհնելով նահատակների յիշատակն ու աշակերտութիւնը դարձաւ Մայրավանք:



Փետրուար 13-ին երեկոյեան ն. Սրբութիւնը բարեհաճեց Տաճար իջնել և ներկայ լինել Տեսանընդառաջի նախատօնակի հանդիսին:



Փետր. 14-ին, Տեսանընդառաջի տօնի առթիւ պատարագ մատուցուեցաւ Մ. Տաճարում, որի ժամանակ ն. Սրբութիւնը հաճել էր ներկայ լինել:

Պատարագիչն էր Տ. Աշոտ եպիսկոպոս, իսկ քարոզիչը՝ Տ. Գարեգին Ժ. վարդապետ:



Փետր. 14-ին Մ. Աթոռ ժամանեց գաղթականների պարենաւորման գործի ընդհ. ղեկավար զինեցաւ Վ. Մ. Քամամչեանի օգնական պր. Լևոն Գէորգ Եւանգուլեան, որ արժանացաւ ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան, ղեկուցանելով նորին Վեհափառութեան դրութեան և պարենաւորման վիճակի մասին:

Նոյն երեկոյեան պ. Եւանգուլեան մեկնեց Երևան, այն տեղից Իզդիր մեկնելու մտադրութեամբ գաղթակա-

նախան հիւանդանոցների և պարենաւորման գործերով, որտեղից պիտի դառնար մի քանի օրով Երևան և ապա մեկնէր Տփլիս:

* * *

Փետրուար 15-ին Մ. Աթոռից Երևան մեկնեցին Եզր. Օգնութեան Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի նախագահ Տ. Գէորգ վարդապետ, անդամներ Տ. Տիրալը ծ. վարդապետ, Տ. Գարեգին ծ. վարդապետ և Տ. Գիւտ արեղայ, մասնակցելու Կենդրոնական Յանձնաժողովի Երևանում գումարած նիստին, ուր ի միջի այլոց և քննութեան խնդիր պիտի լինէր նաև համադումարի մասին եղած հարցերը:

* * *

Փետր. 18-ին Մ. Աթոռի Հոգևոր ձեմարանում գրական երեկոյթ կար, որ իւր ներկայութեամբ պատուել էր ազգիս Վեհ. Հայրապետը: Այդ հաւաքոյթի ժամանակ ձեմարանի պատմութեան դասատու պ. Գ. Ալթունեան կարդաց մի րնդարձակ ուսումնասիրութիւն «Հայոց ազգի հարեաններն ու տիրապետողները՝ քաղաքական և քաղաքակրթական տեսակետից» վերնագրով:

Նոյն երեկոյեան ձեմարանի հ. Տեսուչը մի նախնական հաղորդագրութեամբ զեկուցումն արեց իւր արած նորադիւտ արոնումների մասին Մ. Աթոռում գտնուած, Տանկական Հայաստանից բերած ձեռագիրների մէջ, ուր յաջողել է նորան գտնել Ստեփաննոս Սիւնեցու մեկնութիւնը «Զորից աւետարանչացն» յատկապէս Մատթէոսի, Եղեկիէլի մեկնութիւնը, որոնք մինչև այժմ անյայտ էին: Նոյն ձեռագրի մէջ ի յայտ են ածած նաև մեկնութիւնը, Ոսկերեքանի, Եփրեմ Ասորու և Կիւրեղ Աղէքսանդրացու (Վերջինս գտնուած է նաև Օքսֆորտի ձեռագիրներից մէկի մէջ, ըստ Յուշակի Տ. Տիրալը վարդապետ):

Նորա պրպտումների իբրև հետևանք Երևան է հանած նաև Արիզինէտի մի քանի մեկնարանական ճառերը (Մնըն-

դոց, Յովրի և Եղեկիէլի), որոնց բնագիրները մինչև այժմ անյայտ էին և ոչ մի թարգմանութեամբ երևան չեն հանուած:

Այս և ուրիշ Որիգինեան աշխատութիւններից հ. Գարեգինը կազմել է մի առանձին հատորիկ Մնացորդք բանից Որիգինեայ, վերնագրով, որ շուտով մամուլի կյանքնուի:



Փետր. 20-ին Ն. Սրբութեան ներկայանալու արժանացաւ Իսւմայի նախկին-անգամ և՛ այժմ Աշտարակի շրջանի հաշտարար դատաւոր պ Յովհ. Սաղաթ ելեան:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Սինօզը ընդառաջ գնալով ժամանակակից պահանջներին՝ որոշեց մի քանի շատ կարևոր նախագծեր իրականացնել առանց սպասելու եկեղեցական ժողովի: Առաջին հերթին դրուած են եկեղեցական դատաստանի և ապա ամուսնալուծութեան հարցերը: Վերջինիս իրականացման համար դումարած է եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքը անող յանձնաժողովի նախագահ Զինլեանդիայի արքեպիսկոպոս Սերգիի գեկավարութեամբ մի միջվարչական խորհրդակցութիւն, ուր կան ներկայարուցիչներ՝ հոգևոր իշխանութիւնից, պետական կօնսուլից, պետական դիւանատանից և արդարադատութեան, ներքին գործոց ու Քինանաների նախարարութիւնից: Խորհրդակցութեան մէջ Սինօզի ներկայացուցիչն է Սինօզի անգամ Իօակիմ արքեպիսկոպոսը:

Թեմերից մէկում կասկած էր ծագել, թէ կարելի է հոգևանդիաա կատարել այն սճրագործների համար, որոնք բանաւում պատժի են ենթարկուել: Սինօզը բացատրել է, թէ այն սճրագոր-